ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 42/11

Քաղ.Երեւան **17 հոկտեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփակա-նության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Ի. Ղարիբջանյան (քարտուղար) Ա. Հ. Աբգարյան իր 2011թ. հոկտեմբերի 17-ի նիստում քննարկեց «MAPEI S.p.A» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավտարմատար Ա. Գալոյանի կողմից 2011թ. հունիսի 13-ին ներկայացված «MAPEI» միջազգային գրանցման թիվ՝ IR 1017975 ապրանքային նշանի գրանցման գործողության տարածումը Հայաստանի Հանրապետությունում մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, համաձայն որի ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման բացի «MAPEI» բառից, քանի որ բաղկացած է գրառումներից, որոնք նշում են ապրանքի տեսակը: Այդ կապակցությամբ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, հայտատուին առաջարկվում է սույն որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտարարություն ներկայացնել այդ տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին:

Բողոքում ներկայացված է, որ 2011թ. մարտի 12-ին Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների բաժնի կողմից կայացվել է վերոնշյալ ապրանքային նշանի վերաբերյալ կրկնական փորձաքննության որոշում, ըստ որի նախնական մերժման մասին որոշումը մնում է անփոփոխ:

Սակայն, բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և իր բողոքում նշել է հետևյալ փաստարկները: Ըստ բողքարկողի «MAPEI» հայտարկված ապրանքային նշանը հանդիսանում է բարդ համակցված նշան, որը բաղկացած է բազմաթիվ գրաֆիկական և բառային տարրերից, ինքնատիպ էլեմենտներից՝ կատարված լատինական և կիրիլիցա տառատեսակներով: Նշանը, հիմնականում, կատարված է բաց արկղի տեսքով: Վերևում և ներքևում պատկերված են

ազատորեն դասավորված մի շարք երկրաչափական ծավալային պատկերներ: Ընդհանուր պատկերի ստորին և վերին հատվածներում առկա են նաև այլ երկրաչափական ծավալային պատկերներ և ուղանկյունաձև դրոշմ, որում զետեղված են բառեր՝ կատարված կիրիլիցա տառատեսակով:

Բողոքարկողը գտնում է, որ հայտարկված «MAPEI» համակցված ապրանքային նշանի նկարագրության վրա առկա են տարբեր ինքնատիպ երկրաչափական, գրաֆիկական, ծավալային պատկերներ, ինչն էլ հանդիսանում է տվյալ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությունը և հաշվի առնելով այդ հանգամանքը խնդրում է վերանայել միջազգային հայտ IR 1017975 «MAPEI» համակցված ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին որոշումը և այն գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. հունիսի 13-ին ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա. Գալոյանի կողմից ներկայացվել է «MAPEI» համակցված ապրանքային նշանի (հայտի համարը՝ IR 1017975) գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նշվեց, որ մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, համաձայն որի ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման բացի «MAPEI» բառից, քանի որ բաղկացած է գրառումներից, որոնք նշում են ապրանքի տեսակը: Այդ կապակցությամբ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, հայտատուին առաջարկվում է որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտարարություն ներկայացնել այդ տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին: Հայտատուն հրաժարվել է «MAPEI» ապրանքային նշանը գրանցել՝ դիսկլամացիա անելով գրառումները: Արդյունքում ապրանքային նշանի գրանցումը մերժվել է:

Կոլեգիան առաջարկեց փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «MAPEI S.p.A» ընկերության բողոքը և «MAPEI» (գրանցման թիվ՝ IR 1017975) համակցված ապրանքային նշանի միջազգային գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա. Ազիզյան